

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2015թ. հունվար-մարտին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2013 թ. ապրիլի 1-ի դրությամբ	3 028.0	1 575.9	1 452.1
2014 թ. ապրիլի 1-ի դրությամբ	3 012.4 [◇]	1 567.8 [◇]	1 444.6 [◇]
2015 թ. ապրիլի 1-ի դրությամբ	3 006.8	1 568.2	1 438.6

1 000 մարդ

2. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2013թ.¹

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
Հայաստանի Հանրապետություն	74.8	77.9	71.5
Քաղաքային	74.8	77.8	71.5
Գյուղական	74.6	77.4	71.4

տարի

3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2013թ. հունվար-մարտ	8.8	7.8	9.6
2014թ. հունվար-մարտ	8.4 [◇]	7.8 [◇]	9.0 [◇]
2015թ. հունվար-մարտ	8.3	7.8	8.8

1 000 կենդանի ծնվածի հաշվով

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2013թ. հունվար-մարտ	10.1	8.9	11.2
2014թ. հունվար-մարտ	10.5 [◇]	9.5 [◇]	11.3 [◇]
2015թ. հունվար-մարտ	9,9	9.0	10.8

1 000 կենդանի ծնվածի հաշվով

5. Մայրական մահացության գործակիցը, 2015թ. հունվար-մարտին կազմել է 10.6 (1 դեպք), 100 000 կենդանի ծնվածի հաշվով (2014թ. հունվար-մարտին մայրական մահացության դեպք չի գրանցվել):

¹ Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

7. Ուսումնասրության միջին տևողությունը դպրոցներում 2014/2015 ուսումնական տարում կազմել է 12 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2014թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1 502 662 դրամ (3 613 ԱՄՆ դոլար կամ 2 722 եվրո):

14. Գործազրկության մակարդակը¹ 2014թ. հոկտեմբեր-դեկտեմբերին (IV եռամսյակ) կազմել է 17.8%, ընդ որում կանանցը՝ 18.5%, տղամարդկանցը՝ 17.1%:

15. 2014թ. հոկտեմբեր-դեկտեմբերին (IV եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված¹ է եղել ՀՀ բնակչության 38.9%-ը, այդ թվում կանանց՝ 34.1%-ը և տղամարդկանց՝ 44.7%-ը:

¹Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: